

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ԾՆՆՂՅԱՆ ԹՎԱԿԱՆԻ ՇՈՒՐՁ

ՀՐԱՉԻԿ ՄԻՐՉՈՑԱՆ

Ինչպես գիտենք, նարեկացիագիտության մեջ լուրջ տարածայնություններ կան բանաստեղծի ծննդյան թվականի հարցում^{*}: Բանն այն է, որ ժամանակին Միքայել Չամչյանցը, առանց վկայակոչելու որևէ աղբյուր, գրել է, որ Նարեկացին ծնվել է «ի թուին հայոց իբր .ն. այսինքն է յամի տեառն .951.»¹: Այնուհետև, անդրադառնալով նրա մատենագրական ժառանգությանը, ասում է, որ «դեռևս նորոգ ընկալեալ զկարգ քահանայութեան իբր ՚ի քսան և վեցերորդ ամի հասակի կենաց իւրոց արար սքանչելի և քաղցր վարդապետութեամբ զմեկնութիւն Երզոց երգոյն Սողոմոնի, ՚ի թուականութեանս հայոց .նիգ. այն է յամի տեառն .977. ՚ի խնդրոյ Գուրգենայ թագաւորին անձևացեաց. ըստ որում և ինքն յիշէ ՚ի սկիզբն և ՚ի վերջ մեկնութեան այնր գրոց»²: Միանգամայն իրավացի է ականավոր պատմագետը, որ նշված աշխատության վերնագրում Նարեկացին անվանվում է «ներանձնաւոր քահանայ» և «հոգեշնորհ վարդապետ»³, իսկ հիշատակարանում բանաստեղծը հայտնում է, որ ինքն այն գրել է «Ի ՆԻՉ (977) թուականութեանս Հայոց»⁴, բայց ոչինչ չի ասում իր տարիքի մասին: Չամչյանցի տեսակետը վիճարկել են ականավոր հայագետ ու վաստակաշատ նարեկացիագետ Գ. Ավետիքյանը և Մ. Աբեղյանը: Վերջինս ի մասնավորի գրել է, որ Նարեկացին «ծնված պիտի լինի 940-ական թվականներին, ավելի շուտ այդ թվականների երկրորդ հնգամյակին»⁵: Այսուհանդերձ Չամչյանցի տեսակետը դարձել է տիրապետող և մինչև օրս մնում է շրջանառության մեջ⁶:

Եթե, ինչպես տեսանք, Մ. Աբեղյանը մոտավորապես է որոշակիացրել բանաստեղծի ծննդյան թվականը, ապա նրանից դեռ շատ աս-

* Հոդվածի հիմքում դրված են Մաշտոցի անվ. Մատենադարանի կազմակերպած «Նարեկացիագիտական 3-րդ միջազգային գիտաժողովում» (17-18 հոկտեմբերի 2017) ընթերցված զեկուցման հիմնադրույթները:

¹ Միքայել Չամչեանց, Պատմութիւն հայոց, հատոր Բ, Վենետիկ, 1785, էջ 852:

² Նույն տեղում:

³ Տե՛ս «Մատենագիրք հայոց», ԺԲ. հատոր, Ժ. դար, **Գրիգոր Նարեկացի**, Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 760:

⁴ Նույն տեղում, էջ 882:

⁵ Մանուկ Աբեղյան, Երկեր, Գ, ԵՊՀ հրատ., Եր., 2015, էջ 576:

⁶ Տե՛ս, օրինակ, Մ. Մկրչյան, Գրիգոր Նարեկացի, ՀՄՀ, հ. 3, Եր., 1977, էջ 218: Ի դեպ՝ ուշագրավ է, որ 1955 թ. հրատարակած իր «Գրիգոր Նարեկացի» մենագրության մեջ նա հավանական է համարել, «որ Նարեկացին ծնված լինի 951 թվին» (էջ 114-115), բայց 22 տարի հետո հանրագիտարանային հոդվածում բանաստեղծի ծննդյան տարի է ընդունում որոշակիորեն 951 թվականը, իսկ մահվան՝ 1003 թ., որը նույնպես ստույգ չէ:

ռաջ Նարեկացու Մատյանի աշխարհաբար հայերեն առաջին թարգմանիչ Միսաք Գոչունյանը (Քասիմ), առանց որևէ աղբյուր նշելու, գրել է. «Ս. Գրիգոր Նարեկացի ծնած է Վանայ մօտ Նարեկ գիւղին մէջ, Քրիստոսի 945 թուականին»⁷:

Ասենք նաև, որ այս տեսակետը մինչև անցյալ դարի 40-ական թվականները այնքան հիմնավոր է համարվել, որ նույնիսկ որոշված է եղել, ինչպես հայտնում է Մատյանի աշխարհաբար մյուս թարգմանիչ Գ. Խաչատուրյանը, բանաստեղծի ծննդյան 1000-ամյակը հատուկ տոնախմբությամբ նշել: Քանի որ երկիրը գտնվում էր պատերազմի մէջ, ուստի որոշվել էր տոնակատարությունն իրականացնել մեկ տարի հետո 1946 թվականին: Գ. Խաչատուրյանը այդ տպավորության տակ 1948 թ. գրել է, որ «Սրբազան հեղինակին ծննդեան հազարամեակը ... պիտի տօնախմբուէր՝ յոբելիական մեծ հանդէտով՝ Մայր-Հայրենիքի, հետևաբար և Հայ Սփիւռքի մէջ 1946-ին, ինչպէս հաւաստած էին մեզ»⁸:

1945 թ. ԵՊՀ բանասիրական ֆակուլտետն ավարտած Պարույր Սևակը, ամենայն հավանականությամբ հենց այս իրողությամբ պայմանավորված, «Գրիգոր Նարեկացի» բացառիկ արժեքավոր հոդվածում 1965 թվականին շատ հստակ ասել է, որ Նարեկացու «ծննդից անցել է 1000 և 20 տարի, այդ ընթացքում նրան երկնած ժողովուրդը ծնել է գեթ 20 մեծ բանաստեղծ, բայց առ այսօր վերստին նույն ինքն է բոլոր այդ մեծերի մէջ մեծագույնը»⁹: Այսինքն՝ ականավոր բանաստեղծ ու գիտնական-բանասեր Սևակը Նարեկացու ծնունդը համարել է 945 թ., քանզի՝ 1965-1020=945:

Վերջին տարիներին, թեկուզ և մեծ դժվարությամբ, աստիճանաբար հարթվում են բանաստեղծի ծննդյան թվականի շուրջ եղած տարակարծությունները, և Մ. Չամչյանցի առաջարկած 951-ի փոխարեն ամրապնդվում է 945 թվականը: Ի հաստատումն այս հետևության՝ ասեն, որ Մատյանի քննական բնագրի աշխատասիրողներից Ա. Ղազինյանը, 1995 թ. ի մի բերելով այդ մասին արտահայտված հիմնական տեսակետները, եզրակացրել է. «Այսպիսով, Գրիգոր Նարեկացու ծննդեան հաւանական տարեթիւր մնում է շուրջ 945 թուականը»¹⁰: Փոքր-ինչ այլ կարծիքի է Պ. Խաչատուրյանը, որը, հիմք ընդունելով Մ. Աբեղյանի տեսակետը, բանաստեղծի ծննդյան տարին համարում է 947 թվականը¹¹:

⁷ «Աշխարհաբար Նարեկ», գրաբար բնագիրէն թարգմանեց Միսաք Ա. Մ. Գոչունեան (Քասիմ), Կ. Պոլիս, տպագր. Գ. Գայսէրեան, 1902, էջ 515:

⁸ «Նարեկ. Մատեան ողբերգութեան Ս. Գրիգոր Նարեկացիի», գրաբար բնագրի հանդիպարողութեամբ աշխարհաբարի վերածեց Գարեգին Եպիսկոպոս Տրապիզոնի, Պուէնտս Այրբւս, տպագրութիւն Ստ. Տէօքմէճեան, 1948, էջ ԽԷ: Հետաքրքիր է, որ անվանաթերթի դարձերեսին գրված է. «Ս. Գրիգոր Նարեկացիի ծննդեան հազարամեակին առիթով»:

⁹ **Պարույր Սևակ**, Երկերի ժողովածու վեց հատորով, հ. 5, Եր., 1974, էջ 243:

¹⁰ **Արշալոյս Ղազինեան**, Գրիգոր Նարեկացի. բանաստեղծական արուեստը, Անթիլիաս-Լիբանան, 1995, էջ 18:

¹¹ Տե՛ս **Պ. Խաչատուրյան**, Գրիգոր Նարեկացի, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Եր., 2002, էջ 239:

Վերջապես, Նարեկյան դպրոցի և Նարեկացու գրական ժառանգության քաջագիտակ Հրաչյա Թամրազյանը, չմերժելով Պ. Խաչատրյանի առաջարկած թվականը, միաժամանակ չի բացառել, որ բանաստեղծը «կարող էր ավելի վաղ ծնված լինել»¹²:

Անձամբ ես, դեռևս 2002 թ. վերծանելով Մատյանի ԽԶ բանի Բ ենթագլխում առկա ծածկագրությունը, միանշանակ եզրակացրել եմ, որ բանաստեղծը ծնվել է ստուգապես 945 թվականին¹³: Հետայդու շարունակելով զբաղվել Մատյանի ուսումնասիրությամբ՝ ի հայտ եմ բերել ևս մեկ ծածկագրություն, որի վերծանությունը նույնպես տալիս է 945: Խոսքը վերաբերում է Մատյանի ԻԳ բանի Գ ենթագլխին, որի մասին առաջմ գրավոր կարծիք եմ հայտնել միայն «Նարեկացիագիտական հետազոտություններ» գրքիս կապակցությամբ բան. գիտ. դոկտոր Տ. Գևորգյանի հետ հարցազրույցում¹⁴: Հաշվի առնելով հարցի կարևորությունը՝ հարկ եմ համարում հիշեցնել, որ Մատյանի հիշատակարանում թվարկելով այն ստեղծելու ժամանակ իր կատարած աշխատանքը՝ բանաստեղծն ասում է, որ «ստացեալ հիմնեցի, կառուցի, կարգեցի, կուտեցի, արձանացուցի, դիզի, բարդեցի, կացուցի, ցուցի, հաստատելով ի հրաշակերտութիւն միագոյ իրի զբազմաստեղնեան դրուագս դրութեան այսմ սովերի արգասաւորի»¹⁵ (այս և հետագա ընդգծ. իմն են – Հ. Մ.): Անշուշտ, բանաստեղծի թվարկած բոլոր գործողությունները շատ կարևոր են Մատյանն ուսումնասիրելու և հասկանալու համար, բայց ներկա դեպքում բացառիկ նշանակություն ունի թվարկման վերջում դրված «ցուցի» բայը, որը Հայկազյան բառարանում բացատրված է հետևյալ ձևով. «Ցուցանեմ, ցուցի, ցոյց. ն. ...Ցոյց առնել. երևեցուցանել. տալ տեսանել և գիտել. յայտ առնել. յայտնել. նշանակել. ծանուցանել. զեկուցանել. ապացուցանել. և Արդեամբք ՚ի լոյս ածել. ցըցնել»¹⁶: Բերված առումներից հատկապես կարևոր են ընդգծվածները, իսկ վերջիններից՝ «տալ տեսանել և գիտել» բառակապակցությունը: Սովորաբար ծածկագրություններում հեղինակներն այս կամ այն ձևով հուշում-հասկացնում են ընթերցողին, որ տվյալ հատվածում կա ծածուկ ասված ինչ-որ բան, պետք է ուշադիր լինել այն ընթերցելիս, որպեսզի հնարավոր լինի վերծանել: Մինչդեռ գեղարվեստական խոսքի անգու-

¹² Հ. Թամրազյան, Գրիգոր Նարեկացին և Նարեկյան դպրոցը, գիրք Գ, Եր., 2017, էջ 21:

¹³ Տե՛ս Հ. Միրզոյան, Նարեկացիագիտական հետազոտություններ, հոդվածների ժողովածու, Եր., 2010, էջ 18-20:

¹⁴ Տե՛ս **Միրզոյան Գ.** Перечитывая Григора Нарекаци. Беседы вела Т. Геворгян, «Вопросы литературы», М., 2011, № 2, էջ 407-430, նույնը տե՛ս նաև՝ «Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն», 2012, № 137.1, էջ 65-79:

¹⁵ **Գրիգոր Նարեկացի**, Մատենանոցի հրատարակչության հրատարակությամբ Պ. Մ. Խաչատրյանի և Ա. Ա. Ղազինյանի, Եր., 1985, էջ 642:

¹⁶ Հ. Գաբրիել Աւետիքեան, Հ. Խաչատուր Միրմելեան, Հ. Մկրտիչ Աւգերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հատոր երկրորդ, Եր., 1981, էջ 918:

գական վարպետ և գրչարվեստի քաջագիտակ Գրիգոր Նարեկացին այս դեպքում ևս էապես տարբերվում է մյուսներից և ծածկագրությունների մասին ընթերցողին հուշում-հասկացնում է գեղարվեստական խոսքի ոչ այնքան բովանդակությամբ, որքան հատկապես դրա արտաքին, տեսողության համար գրավիչ, մատչելի ու ընկալելի ձևավորմամբ: Հնարք, որը, ինքնին հասկանալի է, դժվար տեսանելի ու ըմբռնելի էր Սատյանի չտողատված ձեռագրերում ու տպագիրներում: Մինչդեռ քննական բնագրի տողատված հրատարակության մեջ ուշադիր զննությունն ի հայտ է բերում գեղարվեստական խոսքի այնպիսի ձևավորում-ձևակերպում, որն ընթերցողին ինքնին տեսնել է տալիս ու ստիպում ջանալ-գիտենալ, հասկանալ տեսածի իմաստն ու բովանդակությունը: Դրանով իսկ ի հայտ է գալիս բանաստեղծի բազմաշնորհ հանճարի ցարդ աննկատ մնացած մի նոր երես ևս:

Սատյանի ԻԳ (23) գլխի Գ ենթագլխում բանաստեղծն ասում է.

Եթե զինուոր տեսանեմ՝ մահու ակն ունիմ,

Եթե պատգամաւոր՝ խստութեան,

Եթե մատենագետ՝ մուրհակի կորստեան,

Եթե արիւնաւոր՝ անիծից,

Եթե աւետարանական՝ փոշոյ ոտիցն թաւթափելոյ,

Եթե բարեկրան՝ յանդիմանութեան,

Եթե ապառում՝ կսկծման:

Եթե ջրովն ընտրութեան փորձիմ՝ խորտակիմ,

Եթե դեղ ինչ դատման ձգեմ՝ սատակիմ:

Եթե բերս նկատեմ բարութեան՝

Ի կարծեաց չարեացս փախնում,

Եթե ձեռն համբարձեալ՝ կորանամ,

Եթե փոքր ինչ խրտուիլ՝ սարսեմ,

Եթե սակաւ մի թնդիւն՝ ընդոստիմ:

Եթե ի խրախճանս ըմպելեաց հրաւիրիմ՝ դողամ,

Եթե մեծիդ յանդիման լինիմ՝ սարսափեմ,

Եթե ի հարցումն բանի կոչիմ՝ կարկիմ,

Եթե իրաւամբ քննիմ՝ համբանամ:

Ինչպես դժվար չէ տեսնել, բերված հատվածի բոլոր տողերը սկսվում են «Եթե» շաղկապով, բացի 11-րդից, որը ամբողջ հատվածը բաժանում է երկու անհավասար մասերի՝ բաղկացած 10 և 7 տողերից, որոնք բավականին տարբերվում են ինչպես բովանդակությամբ, այնպես էլ վերջավորությամբ: Արտաքին, ձևական, աչքի զարնող առանձնահատկությունն այն է, որ տողավերջի բառերը պատկանում են տարբեր խոսքի մասերի՝ 11 բայ, 6 գոյական և 1 դերբայ: Ընդ որում՝ գոյականներից 5-ն ավարտվում է ն տառով, 1-ը՝ ց-ով, բոլոր բայերը՝ մ տառով, իսկ դերբայով դրված բառը՝ յ-ով:

Մատյանի մանրագնին ստուգումից պարզվեց, որ ևս երեք գլուխների մեկական ենթագլխի բոլոր տողերն սկսվում են «Եթե» շաղկապով՝ ԻԴ գլխի Բ ենթագլուխ, ՄԱ գլխի Բ ենթագլուխ և ՀԶ գլխի Բ ենթագլուխ: Ինչպես տեսնում ենք, ԻԳ գլխի՝ «Եթե» շաղկապով սկսվող տողերը դրված են Գ ենթագլխում, մինչդեռ մյուս երեք գլուխների «Եթե»-ով սկսվող տողերը գտնվում են Բ ենթագլուխներում: Ավելին, ԻԴ և ՄԱ գլուխների Բ ենթագլուխները նույնպես ունեն 18-ական տող, իսկ ՀԶ գլխի Բ ենթագլուխը բաղկացած է 31 տողից: Ասենք նաև, որ ԻԴ գլխի Բ ենթագլխի բոլոր 18 տողերն ավարտվում են անցյալ ժամանակի եզակի թվի առաջին դեմքով դրված բայերով և ունեն -յ վերջնահնչյունը, ՄԱ գլխի Բ ենթագլխի բոլոր տողերն ավարտվում են ներկա ժամանակի եզակի թվի երկրորդ դեմքով դրված բայերով և ունեն -ս վերջնահնչյունը, իսկ ՀԶ գլխի Բ ենթագլխի բոլոր 31 տողերն ավարտվում են ներկա ժամանակի եզակի թվի երկրորդ դեմքով դրված **ես** օժանդակ բայով: Անկարևոր չէ և այն հանգամանքը, որ Մատյանի մեզ հետաքրքրող չորս գլուխներից անմիջական հարևանությամբ գտնվող ԻԳ և ԻԴ գլուխների նշված ենթագլուխներում բանաստեղծի խոսքը վերաբերում է հենց իրեն, իսկ ՄԱ և ՀԶ գլուխների Բ ենթագլուխներում, որոնք իրարից բաժանված են 24 այլ գլուխներով, խոսքը Աստծու մասին է:

Քանի որ սույն հոդվածում ինձ նախ և առաջ հետաքրքրում է բանաստեղծի ծննդյան թվականի հարցը, ուստի հարկ եմ համարում առանձնակի ուշադրություն դարձնել նրա անձին վերաբերող և անմիջական հարևանությամբ գտնվող ԻԳ և ԻԴ գլուխների նշյալ ենթագլուխների վրա: ԻԴ գլխի Բ ենթագլխում բանաստեղծը գրում է.

Եթե զգեստո՞վն լուսոյ պարծիւմ, յորմէ մերկացայ,

Եթե ի ստացո՞ղ դարձին յուսացայց, յորմէ խորթացայ,

Եթե ի լուսո՞յն իղձս դիմեցից, յորմէ մեկնեցայ,

Եթե Յիսուսի՞ յոսկերսն յաւդիւմ, յորմէ մերժեցայ,

Եթե ի թեւս նորա՞ մերձիւմ, յորմէ աւտարացայ,

Եթէ յապաւե՞նն ապաստանեցայց, յորմէ խեթացայ,
Եթէ ի փրկութեանն նորոգութի՞ւն, յորմէ մահացայ,
Եթէ ի զգաստութեանն զուարթութի՞ւն, յորմէ ես լքայ,
Եթէ ի կանո՞նն կենաց ուխտի, յորմէ փոխեցայ,
Եթէ ի սահմա՞նն հաստադրական, յորմէ սահեցայ,
Եթէ յանշարժ վիմի՞ն պնդութեան, յորմէ սասանեցայ,
Եթէ ի շա՞րս գումարտակին, յորմէ հոսեցայ,
Եթէ ի քաղա՞քն անդրանկաց շինիմ, յորմէ գերեցայ,
Եթէ հանապազորդեան հացի՞ն աղաւթեմ, զոր ոչ վաստակեցայ,
Եթէ փոխադրութի՞ւն երկանցն խնդրեմ, յոր ոչ քրտնեցայ,
Եթէ պարգեւա՞ւքն պսակեցայց, յոր ոչ յանդիսացայ,
Եթէ արձա՞ն ինձ կենաց գրեցից, յորմէ ջնջեցայ,
Եթէ գերախտեացո՞ւ ձի՞ր յիշեցից, զոր միշտ մոռացայ:

Եթէ ԻԳ գլխի Գ ենթագլխի տողերի սկսվածքում աչքի է զարնում այն հանգամանքը, որ միայն 11-րդ տողն է սկսվում ի նախդիրով, ապա ԻԴ գլխի Բ ենթագլխում բանաստեղծն ասես ընթերցողի ուշադրությունն ավելի սրելու՝ «տեսանել և գիտել» տալու համար գործածել է բազմաթիվ ի նախդիրներ, բայց դրանք բոլորը տեղադրել է «Եթէ» շաղկապից հետո՝ ցուցադրելով այդ նախդիրի գործածության միանգամայն տարբեր առումներ:

Հավելեմ նաև, որ խոսքի արտաքին ձևավորման տեսակետից ԻԴ գլխում բանաստեղծի կիրառած արտասովոր հնարներից է և այն, որ Ա և Բ ենթագլուխները, անքակտելիորեն կապված լինելով միմյանց, նորից ընթերցողի տեսողությունն ավելի սրելու, այսինքն՝ «տեսանել և գիտել» տալու նպատակով ամբողջական խոսքը առերևույթ արհեստականորեն բաժանել է երկու մասի՝ Ա ենթագլխում զետեղելով 11, իսկ Բ ենթագլխում՝ 18 տող՝ բաժանման համար հինք դարձնելով տողակգրի բառերի միջև եղած աննշան տարբերությունները. Ա ենթագլխի 11 տողերից առաջին երկուսից բացի՝ մյուս բոլորն սկսվում են «Թէ», իսկ Բ ենթագլխի բոլոր տողերը՝ «Եթէ» շաղկապներով: Ասվածն ավելի ընկալելի դարձնելու համար հարկ եմ համարում բերել նաև Ա ենթագլուխը.

Եւ արդ, որո՞ց խնդրոց արժանաւոր վարկանելով զիս՝ մատչիմ աղերսել,
Արքայութեա՞նն, յորմէ վրիպեցայ,
Թէ փառա՞ցդ վայելչութեան, յորմէ զրկեցայ,
Թէ կենա՞ցդ անմահականաց, յորմէ հերքեցայ,
Թէ ընդ հրեշտակսն պարակցութեա՞ն, յորմէ տրոհեցայ,
Թէ ընդ արդա՞րսն մասնակցութեան, յորոց ճեղքեցայ,
Թէ ու՞ր որթոյն կենդանւոյ, յորմէ քանցեցայ,
Թէ ո՞ստ տնկոյն բերկրութեան, յորմէ գաւսացայ,
Թէ ծաղի՞կ փառացն շնորհի, յորմէ թափեցայ,
Թէ պանծանա՞ցն ժառանգաւոր, յորմէ կորացայ,
Թէ հայրենի ծոցո՞յն հարազատ, յորմէ ընկեցայ:

Կարծում եմ՝ դժվար չէ համոզվել, որ թե՛ Ա և թե՛ Բ ենթագլուխներում բանաստեղծը համակված է նույն անորոշության զգացումով, քանզի չգիտի, թե ինչ խնդրի Տիրոջից, որովհետև այն ամենը, ինչ կարելի է ակնկալել, նախկինում ունեցել ու զրկվել է և դրանով իսկ կորցրել նոր բան խնդրելու իրավունքն ու ստանալու հույսը: Այդ է պատճառը, որ թե՛ Ա ենթագլխի 10 տողերը (բացի 1-ինից) և թե՛ Բ ենթագլխի բոլոր 18 տողերն ավարտվում են անցյալ ժամանակի եզակի թվի առաջին դեմքով դրված բայերով: Միակ տարբերությունը, ինչպես ասվեց, այն է, որ Ա ենթագլխի տողերը, բացի առաջին երկուսից, սկսվում են «Թէ» շաղկապով, իսկ Բ ենթագլխի բոլոր տողերը՝ «Եթէ» շաղկապով: Դիտելի է և այն պարագան, որ ԻԳ և ԻԴ գլուխներն ունեն չորսական ենթագլուխ, իսկ ԾԱ և ՀԶ գլուխները՝ համապատասխանաբար 5 և 3 ենթագլուխ: Մեզ հետաքրքրող ԻԳ և ԻԴ գլուխների Գ և Բ ենթագլուխների միջև կա մեկ այլ տարբերություն ևս. ԻԳ գլխի Գ ենթագլուխն առերեւոյթ կարծես կապ չունի նախորդ և հաջորդ ենթագլուխների հետ, մինչդեռ ԻԴ գլխի Բ ենթագլուխը, ինչպես տեսանք, թե՛ բովանդակությամբ և թե՛ շարադրման ձևով օրգանական շարունակությունն է Ա ենթագլխի: Այդ է վկայում նաև այն իրողությունը, որ այդ երկու ենթագլուխների բոլոր տողերում գործածված են հարցական նախադասություններ: Ավելին, եթե ԻԳ գլխի Գ ենթագլխում հեղինակը հիմնականում նկարագրում է ներկայում կյանքի տարբեր երևույթներից ստացած կամ ստանալիք տպավորություններն ու դրանց հանդեպ իր դրսևորելիք կամ դրսևորած վերաբերմունքը, ապա ԻԴ գլխի Ա և Բ ենթագլուխ-

ներում, ընդհակառակը, նկարագրում է անցյալում ունեցած կորուստները՝ վրիպեցայ, գրկեցայ, հերքեցայ, տրոհեցայ, ճեղքեցայ, քանցեցայ, գաւսացայ, թափեցայ, կորացայ, ընկեցայ, մերկացայ, խորթացայ, մեկնեցայ, մերժեցայ, ատարացայ, խեթացայ, մահացայ, լքայ, փոխեցայ, սահեցայ, սասանեցայ, հոսեցայ, գերեցայ, ոչ վաստակեցայ, ոչ քրտնեցայ, ոչ հանդիսացայ, ջնջեցայ, մոռացայ: Բնական է, որ այսքան կորուստներից հետո բանաստեղծը պիտի խորապես կասկածեր ապագայում դրանք վերականգնելու հնարավորությանը:

Քանի որ ներկա դեպքում մեզ հետաքրքրում է հատկապես ԻԳ գլխի Գ ենթագլուխը, ուստի տեսնենք, թե այնտեղ ինչ է ասում բանաստեղծը: Ի դեպ՝ Մատյանի աշխարհաբար թարգմանիչներն այն ընկալել են միանգամայն տարբեր ձևով: Դա զգացվում է առաջին հերթին «Եթե» շաղկապի հարցում նրանց վերաբերմունքում: Եթե Մ. Գոչունյանը և Թ. Գուշակյանը պահպանել են բոլոր «եթե»-ները, ապա Գ. Խաչատուրյանը վեց անգամ «եթե»-ն փոխարինել է «թե» շաղկապով, Մ. Խերանյանը տասնյոթ «եթե»-ներից տասնհինգը դարձրել է «թե», իսկ Վ. Գևորգյանը ութ անգամ օգտագործել է «եթե», որից երկուսը տողամիջում, յոթ անգամ՝ «թե», մեկ անգամ՝ «երբ», իսկ մեկն ընդհանրապես զեղչել է:

Ենթագլխի առաջին տողում բանաստեղծը, գործածելով ներկա ժամանակով դրված ներգործած «տեսանեմ» բայը, փաստորեն ասում է, որ եթե զինվոր եմ տեսնում, ապա մահ եմ ակնկալում կամ ունենում եմ մահվան սպասում: Այնուհետև, 6 տողերում պահպանելով տեսանեմ բայի (տեսնում եմ) գործողությունը, 8-րդ և 9-րդ տողերում փոքր-ինչ փոխելով խոսքի ուղղվածությունը, գրում է.

Եթե ջրովն ընտրութեան փորձիմ՝ խորտակիմ,

Եթե դեղ ինչ դատման ձգեմ՝ սատակիմ:

Պարզ է, որ այստեղ բանաստեղծը նկատի ունի ոչ թե անցյալում կատարված կամ ներկայում կատարվող, այլ ապագայում հնարավոր կատարվելիք գործողություններ, որովհետև երկուսն էլ կարող են հենց կատարողի համար ունենալ կործանարար հետևանք: Ըստ այդմ խուսափելով դրանցից՝ բանաստեղծը ո՛չ մեկը և ո՛չ էլ մյուսը չի կատարել ու չի կատարում: Դիտելի է, որ այս երկու տողը առանձնացված են նախորդ և հաջորդ տողերից, որովհետև 7-րդ և 9-րդ տողերն ավարտվում են վերջակետով: 10-րդ և 11-րդ տողերում նորից խոսքը դարձնելով ներկային՝ բանաստեղծը շատ հաստակ ասում է.

Եթե բերս նկատեմ բարութեան՝
Ի կարծեաց չարեացս փախնում,

այսինքն՝ եթե բարության բերք եմ տեսնում, չար կասկածներով փախչում եմ: Ըստ այդմ՝ շատ կարևոր է 12-րդ տողը՝ «Եթե ձեռն համբարձեալ՝ կորանամ», որտեղ, փաստորեն, կորանամ բառից բացի, ուրիշ բայ չի գործածել: Ինքնին հասկանալի է, որ 10-րդ տողում գործածված նկատեմ (նկատում եմ) բայը իր ուժը պահպանում է նաև այստեղ և հաջորդող՝ 13-րդ և 14-րդ տողերում: Ի դեպ, թարգմանիչներից Մ. Գոչունյանը, Թ. Գուշակյանը, Գ. Խաչատուրյանը և Մ. Խերանյանը 14-րդ տողում թնյուն բառի համար գործածել են «լսեմ» բայը, իսկ Վ. Գևորգյանը պարզապես հրաժարվել է «նկատեմ» կամ «լսեմ» բայերից և թարգմանել՝ «Ընդոստնում՝ ամեն թեթև թնյունից»: Այսինքն՝ բարդ նախադասությունը պարզեցրել է:

Ենթազվիսի մնացյալ չորս տողերի բարդ նախադասությունների առաջիններում բանաստեղծը գործածել է ներկա ժամանակի եզակի թվի առաջին դեմքով դրված կրավորաձև *հրաւիրիմ, լինիմ, կոչիմ և քննիմ* բայեր, իսկ երկրորդներում՝ *դողամ, սարսափեմ, կարկիմ, համրանամ*, որոնք բոլորն էլ ցույց են տալիս ներկայում կատարվող՝ *դողում եմ, սարսափում եմ, կարկամում կամ կարկվում եմ և համրանում եմ* գործողություններ: Մինչդեռ թարգմանիչներն ամբողջ ենթազվիսն ընկալել են որպես ապագային ուղղված խոսք և թարգմանել ըստ այդմ, բայց առանձին տողեր տրված են ներկա ժամանակով, ուստի ստացվել է մասամբ հակասական ու բնագրին ոչ համարժեք թարգմանություն: Կան նույնիսկ աղաղակող սխալներ, բայց մանրամասն ներկայացնելու հարկ չկա: Բերենք միայն մեկ օրինակ. Թ. Գուշակյանը «Եթե ձեռն համբարձեալ՝ կորանամ» տողը թարգմանել է «եթե ձեռք վերցնեմ՝ կը կորանամ»: Նախ «համբարձեալ» բառը բնավ էլ չի նշանակում վերցնել կամ բարձրացնել, այլ նշանակում է բարձրացած կամ բարձրացրած, ինչպես ընկալել են մյուս թարգմանիչները: Երկրորդ, քանի որ սխալ է ընկալել համբարձեալ բառը, ուստի պահպանելով կորանամ բայը՝ թարգմանությամբ ստացվել է անբնական ու անտրամաբանական միտք. ինչպե՞ս կարող է մեկը ձեռք բարձրացնել ու դրանից հենց ինքն էլ կորանալ: Այս տեսակետից խորհելու տեղիք է տալիս հատկապես ենթազվիսի վերջին երկու տողի՝

Եթե ի հարցումն բանի կոչիմ՝ կարկիմ,

Եթե իրավամբք քննիմ՝ համրանամ,

թարգմանությունը: Մ. Գոչունյանը դրանք թարգմանել է «եթե բան մը հարցուելու կանչուիմ՝ կը պապանձիմ. եթե իրաւունքով քննուիմ՝ կը համրանամ», Թ. Գուշակյանը՝ «եթե հարցաքննութեան կանչուիմ՝ կը

կարկիմ. Եթէ արդարութեամբ քննուիմ՝ կը համրանամ», Գ. Խաչատուր-
յանը՝ «Եթէ կանչուիմ հարցափորձի՝ կը կարկիմ, // Թէ քննուիմ արդա-
րութեամբ՝ կը համրանամ», Մ. Խերանյանը՝ «Թէ հարցաքննութեան
կանչվեմ՝ կկարկամեմ. // Թէ իրավամբ քննվեմ՝ կհամրանամ», Վ.
Գևորգյանը՝ «Պիտի կարկամեմ, եթէ կանչվելու լինեմ հարցումի, // Եթէ
իրաւամբ քննվելու լինեմ, պիտի համրանամ», ռուս. տողացի՝ «Коли
буду вызван на допрос, как воды в рот наберу, // Коли станут меня по
закону судит, онемею»: Իրավամբ հարց է ծագում. ինչո՞ւ պիտի բավա-
կանին պատկառելի տարիք ունեցող բանաստեղծը խոսեր ապագայում
ինչ-որ իրավիճակներում իր դրսևորելիք վարքագծի մասին՝ անտեսե-
լով ներկան ու անցյալը: Չէ՞ որ, իր իսկ խոստովանութեամբ, ապագան
միշտ մնում է կասկածելի, մինչդեռ ներկան ստույգ է, իսկ անցյալը՝ ան-
դառնալի: Այդ է պատճառը, որ Մատյանի Բան ԻԸ-ում՝ չկողմնորոշվե-
լով, թէ ինչ հայտնի, ինչի մասին ճառի կամ որքան ծածուկ բաներ բա-
ցահայտի, միանշանակ գրել է.

Եւ կամ վասն որո՞ց խոստովանեցայց.

Զներկայի՞ ցս, գոր արդէն ունիմ,

Թէ՞ զանցելոցն, գոր մթերեցի,

Զապագայի՞ ցն, յորոց կասկածեմ...

Ցավոք, թարգմանիչների ուշադրությունից վրիպել է այն փաստը,
որ Մատյանի ԻԳ գլխի Բ ենթագլխում բանաստեղծի՝ «Եւ պատասխա-
նարան լեզուիս՝ յիրաւանցն աստար՝ կարկեցեալ, // Եւ անհամբոյր
շրթանցս դրութիւն՝ արինաւոր դատմամբ պապանձեալ» տողերը (քնն.
բնագրում տ. 50-51) իրենք իսկ թարգմանել են որպէս կատարվածի, ա-
վարտվածի, անցածի մասին խոսք, որը հար և նման է Գ ենթագլխի «Ե-
թէ ի հարցումն բանի կոչիմ՝ կարկիմ, // Եթէ իրաւամբք քննիմ՝ համրա-
նամ» տողերի բովանդակությանը: Համեմատության համար հարկ եմ
համարում բերել նաև Բ ենթագլխի մեզ հետաքրքրող երկու տողի
թարգմանությունները. Մ. Գոչունյան՝ «Պատասխանելու յատուկ լեզուս
կարկեցաւ, որովհետեւ իրաւունքէ զուրկ էի, և անզուսպ շրթունքներս
պապանձեցան օրինաւոր դատաստանին առջեւ» (էջ 110), Թ. Գուշակ-
յան՝ «Լեզուիս պատասխանարանը՝ իրաւագուրկ՝ կարկեցաւ. անհամ-
բոյր շրթունքներս պապանձեցան արդար դատապարտութեամբ» (էջ
91), Գ. Խաչատուրյան՝ «Երբ իրաւունքէն հեռացած լեզուս պատասխա-
նելու անկար՝ է կարկած, // Եւ անհամբոյր բարբառող շրթներս արժան
դատումով մըն են պապանձած» (էջ 54), Մ. Խերանյան՝ «Երբ իրավա-
գուրկ պատասխարանն է լեզվիս կարկամած, // Եվ իմ անհամբոյր

բարբառող շուրթերս իրոք արժանի կերպով պապանձված» (էջ 127), Վ. Գևորգյան՝ «Երբ իրավագուրկ լեզուս է դարձել համր ու կարկամ, // Պապանձ են արդար դատապարտությամբ շուրթերս անհամբույր» (էջ 135), ռուս. տողացի՝ «Лишенный права ответственания, онемел мой язык, // И мой надменно сложенные уста по справедливости стали безмолвны» (էջ 88):

Ուշագրավ է, որ բանաստեղծը նույն միտքը, բայց միանգամայն այլ ձևակերպմամբ, արտահայտել է նաև Մատյանի ՀԱ բանում՝ ասելով «Ի բացուստ ճոռումս խաւսիմ, // Եւ ի պատասխանութեանն պահու պապանձեալ կարկիմ»: Ի դեպ, բոլոր թարգմանիչները այս տողերը նույնպէս թարգմանել են որպէս ոչ թե ապագային, այլ ներկային վերաբերող խոսք: Ահա դրանցից մի քանիսը. Մ. Գոչունյան՝ «հեռուէն կը ճոռոմաբանեմ և պատասխանատուութեան պահուն կարկելով կը պապանձիմ» (էջ 347), Մ. Խերանյան՝ «Խոսում եմ հեռվից ճոռում, // եւ պատասխանելու պահին պապանձվում եմ» (էջ 428), Վ. Գևորգյան՝ «Հեռվից խոսում եմ ճոռոմ ու մեծ-մեծ, // Սակայն պապանձվում ու կարկամում եմ պատասխան տալիս» (էջ 434), ռուս. տողացի՝ «На расстоянии велеречив я - // При ответе, заикаясь, смолкаю» (էջ 227): Ինչպէս տեսնում ենք, ԻԳ և ՀԱ գլուխներում գործածված «կարկիմ» բայը առաջին դեպքում թարգմանել են ապառնիի, իսկ երկրորդ դեպքում՝ ներկայի իմաստով: Իսկ եթե հիշենք, որ նրա մասին հյուսված ավանդազրույցներից մեկի համաձայն՝ բանաստեղծը կանչվել էր նմանատիպ հարցաքննության, որից կարողացել էր ազատվել միայն տապակած աղավնիները վերակենդանացնելու հրաշագործությամբ, ապա, կարծում եմ, պետք է ընդունել, որ, անշուշտ, սխալ է ԻԳ գլխի Գ ենթազրկում գործածված «կարկիմ» բայը ապառնիի իմաստով թարգմանությունը, քանզի ասելով «Եթէ ի հարցումն բանի կոչիմ՝ կարկիմ, // Եթէ իրաւամբք քննիմ՝ համբանամ»՝ բանաստեղծը նկատի է ունեցել ոչ թե անորոշ ապագայում հարցուփորձի ենթարկվելու կամ իրապէս քննվելու հնարավորությունը, այլ ոչ հեռավոր անցյալում արդեն տեղի ունեցած ու կատարված նմանատիպ իրողություններ: Այս տեսակետից ուշագրավ է նաև հաջորդ՝ ԻԴ գլխում բանաստեղծի՝ իրեն բնորոշ անկեղծությամբ խոստովանությունը.

Եվ քանզի զվերջինս **համբուրեցի դառնութիւն,**
Տանջանս, խէթս, տխրութիւնս,
Վիշտս հոգեկանս, ցաւս անխնամարկելիս,
Տարակոյսս անյուսադրելիս, ամաւթանս անպարուրելիս,
Խայտառականս անվերարկելիս, պատկառանս անհամարձակելիս,
Փախուստս անդառնալիս, հալածանս անմարդասիրելիս...

Մեզ հետաքրքրող չորս գլուխներից ոչ միայն ձևով, այլև բովանդականությամբ սերտորեն կապված են հատկապես ԻԳ և ԻԴ գլուխների նշված ենթագլուխները: Ընդ որում՝ այդ կապը զգացվում է ոչ միայն այն բանից, որ երկուսում էլ խոսքը բանաստեղծի անձի մասին է (առաջինում նկարագրվում են բանաստեղծի՝ տվյալ պահի հոգեկան ծանր ապրումները, իսկ երկրորդում՝ ոչ հեռավոր անցյալում կրած ցավալի կորուստները), այլև թե՛ մեկում և թե՛ մյուսում փոքր-ինչ տարբեր ձևով շեշտվում է նույն բանը՝ յուրատեսակ կամուրջ գցելով բանաստեղծի կյանքի անցյալ և ներկա փուլերի միջև: Բանն այն է, որ ԻԳ գլխի տող 57-ում կարդում ենք. «Եւ անուանս գիր՝ ի կենաց մատենէն եղծեալ», իսկ ԻԴ գլխում չիմանալով ինչ խնդրել Աստծուց՝ 28-րդ տողում ասում է. «Եթէ արձա՛ն ինձ կենաց գրեցից, յորմէ ջնջեցայ»: Կարծում եմ՝ սա միանշանակ վկայում է այն մասին, որ Մատյանը գրելիս բանաստեղծն իսկապես եղել է պատժված, ուստի և՛ կենաց Մատյանում գրվելու հնարավորությունից զրկված, բայց Մատյանը գրելուց հետո և հենց Մատյանի շնորհիվ վերագտել է իր այդ իրավունքը, որը շատ հստակ երևում է ՂԲ և ՂԳ գլուխներից, որոնք, արտահայտած տրամադրությամբ արմատապես տարբերվելով մյուս 93 գլուխներից, գրվել են դրանցից փոքր-ինչ հետո և անպայման պետք է դրվեն վերջում՝ համապատասխանաբար որպես ՂԴ և ՂԵ գլուխներ:

Արդ, ամփոփելով վերը շարադրվածը, կարծում եմ իրավունք ունեմ եզրակացնելու, որ Մատյանի՝ միայն «Եթէ» շաղկապով սկսվող տողերից բաղկացած մեզ հետաքրքրող չորս ենթագլուխների միջև առկա կառուցվածքային-ձևական ընդհանրությունների և նմանությունների հետ մեկտեղ՝ նկատվում են նաև էական տարբերություններ: Այս տեսակետից հատկապես առանձնանում է ԻԳ գլխի Գ ենթագլուխը, որը թեև ԻԴ և ՕԱ գլուխների Բ ենթագլուխների նման բաղկացած է 18 տողից, բայց նրանցից ակնհայտորեն տարբերվում է տողադասավորությամբ և տողավերջվածքով:

Նշված տարբերություններն ավելի քան ակնառու են դառնում հատկապես ԻԴ գլխի Բ ենթագլխի համեմատությամբ: Բանն այն է, որ թեև այս երկու ենթագլուխներում խոսքը հենց բանաստեղծի անձի մասին է և նկատելի են բովանդակային կապ ու ընդհանրություն, բայց ԻԳ գլխի Գ ենթագլխի կառուցվածքային աչքի զարնող տարբերությունը, ինքնին վերցրած, պատահական երևույթ չէ, այլ հեղինակային որոշակի մտահղացման զգայական-տեսանելի դրսևորում-ցուցադրություն է: Այս տեսակետից անչափ ուշագրավ է քննական բնագրի աշխատասիրողների այն դիտարկումը, որ Մատյանի ԶԳ Բանի 32-45-րդ տողերում բանաստեղծը «անշուշտ ոչ պատահականորեն, այլ ակնհայտ նպատակադրումով, ստեղծել է ներքին հանգավորում՝ **լոյս-յոյս** (տ. 32), **խաւար-**

յիմար (տ. 33), **բարի-գովելի** (տ. 34)¹⁷ (ընդգծ. աշխատասիր. են - Յ. Մ.)
 և այլն: Արդ, եթե բանաստեղծը «ակնհայտ նպատակադրումով» է դիմել
 ներքին հանգավորման, ապա այստեղից հետևում է, որ մեզ հետաքրք-
 րող ենթագլուխներում խոսքի արտաքին ձևավորում-ձևակերպում-
 գծագրումն ու հանգավորումը նույնպես բանաստեղծը կատարել է ոչ
 թե «պատահականորեն, այլ ակնհայտ նպատակադրումով», այսինքն՝
 ընթերցողի ուշադրությունը սրելու, «տեսնել և գիտել տալու» համար ոչ
 միայն խոսքի իմաստն ու բովանդակությունը, այլև այնտեղ առկա ծած-
 կագրությունը:

Հաշվի առնելով խնդրո առարկա ենթագլխի 18 տողերից 11-րդ տո-
 ղի **ի** նախդիրով սկսվելու, շարժման գործողություն նշելու հանգամանքը
 և դրանով իսկ ամբողջ ենթագլխի տողաքանակը երկու անհավասար
 մասերի (10 և 7 տող) բաժանելու փաստը՝ ես գտնում եմ, որ տվյալ դեպ-
 քում բանաստեղծը գեղարվեստական խոսքի գեղագրական ձևավոր-
 մամբ գծագրել է թվաբանական հանման գործողություն՝ ծածկագրելով
 ինչ-որ թիվ: Ուստի այդ ենթագլխի «Եթե»-ով սկսվելով 10 տողերից
 (դրանք դիտում ենք նվազելի) հետո 11-րդ տողն սկսվում է բացառական
 հոլովով դրված **ի** նախդիրով և ավարտվելով «փախնում» բայով՝ ցույց է
 տալիս բաժանման-անջատման գործընթաց, որը դիտում ենք հանման
 նշան, իսկ սրան հաջորդող «Եթե»-ով սկսվող 7 տողը միասին վերցրած՝
 հանելի: Ըստ այդմ կունենանք թվաբանական հետևյալ հավասարումը՝
 $10 \cdot (եթե) - 7 \cdot (եթե) = X$: Հանրահայտ է, որ հայոց այբուբենի գրերն ունեն
 իրենց թվային արժեքները, ուստի տառերի փոխարեն տեղադրելով
 թվային արժեքները՝ կունենանք՝ $10 \cdot (5 \cdot 9 \cdot 7) - 7 \cdot (5 \cdot 9 \cdot 7) = X$: Կատարելով
 նշված գործողությունները՝ կստանանք՝ $10 \cdot 315 - 7 \cdot 315 = 3 \cdot 315$ կամ $3150 -$
 $2205 = 945$, որը իմ խորին համոզմամբ, հենց բանաստեղծի ծննդյան ցարդ
 որոնելի թվականն է: Հնարավոր է՝ բանաստեղծը, զգալով իր կիրառած
 ծածկագրության դժվարընկալելիությունը, հարկ է համարել ուղիղ 23
 գլուխ հետո, այսինքն՝ Մատյանի ԽԶ (46) գլխի Բ ենթագլխում նույնպես
 ծածկագրել իր ծննդյան թվականը՝ կիրառելով անհամեմատ ավելի դյու-
 րին եղանակ: Բնականաբար, վերջինիս վերծանությունից, որը կատա-
 րել ենք դեռևս 2002 թ., նույնպես ստացվել է նույն թվականը: Ի հավե-
 լումն ասվածի՝ հարկ եմ համարում նշել նաև, որ ԽԶ, ինչպես և ԻԳ ու ԻԴ
 գլուխները բաղկացած են չորս ենթագլխից: Ընդ որում՝ այստեղ ևս,
 խոսքն ուղղելով իր անձին, բանաստեղծը հորինել է մարդու կազմույթ-
 յան մասին փայլուն գովաբանություն:

Եթե մի պահ վերհիշենք, որ 1946 թվականին նախատեսվում էր
 տոնել բանաստեղծի ծննդյան 1000-ամյա հոբելյանը, բայց հանգամանք-
 ների բերումով, ցավոք, այն չկայացավ, ապա ժամանակն է մտածելու
 2045 թվականին ծննդյան 1100-ամյակի տոնակատարության մասին:

¹⁷ **Գրիգոր Նարեկացի**, Մատենան ողբերգութեան, էջ 1101:

Համոզված եմ, որ առաջիկա 27 տարիների ընթացքում կփարատվեն քանաստեղծի ծննդյան թվականի շուրջ եղած տարակարծությունները, և 2015 թ. ապրիլին Հռոմի Ֆրանցիսկոս սրբազան պապի կողմից Տիեզերական Վարդապետ հռչակված Սուրբ Գրիգոր Նարեկացու ծննդյան 1100-ամյակի տոնակատարությունը կարևոր իրադարձություն կդառնա ինչպես համայն հայության, այնպես էլ աշխարհի մշակույթների ու ժողովուրդների կյանքում:

Բանալի բառեր – *քանաստեղծ, ծննդյան թվական, ծածկագրություն, ծածկագրության վերծանում, խոսքի գեղագրական ձևավորում, ցուցանել, դարձնել տեսանելի և ընկալելի:*

ГРАЧИК МИРЗОЯН – О дате рождения Григора Нарекаци. – Обобщая высказанные в литературе, посвящённой поэту, основные точки зрения относительно даты его рождения, а также принимая за основу собственную расшифровку имеющейся в главах 23 и 46 «Книги скорбных песнопений» тайнописи, автор приходит к выводу, что величайший армянский поэт определённо родился в 945 году. Этот вывод косвенно подтверждается тем, что в 40-е годы минувшего века было решено торжественно отметить 1000-летие со дня рождения Нарекаци, но в силу некоторых причин мероприятие не состоялось. Автор выражает надежду, что за предстоящие 27 лет рассеются ещё не устранённые сомнения касательно даты рождения поэта и в 2045 г. будет отмечено 1100-летие его рождения.

Ключевые слова: *поэт, дата рождения, тайнопись, расшифровка тайнописи, каллиграфическое оформление речи, показать, сделать зримым и осязательным*

HRACHIK MIRZOYAN – On the Date of Birth of Grigor Narekatsi. – Generalizing the main points of view concerning the date of birth of the poet expressed in literature, also his own decryption expressed in Chapters 23 and 46 of the “Book of Lamentations” assuming as a basis, the author comes to the conclusion that the greatest Armenian poet was definitely born in 945. This deduction is indirectly confirmed by the fact that in the 40s of the last century it was decided to solemnly celebrate the 1000th anniversary of Narekatsi’s birth, but for some reasons, the event did not take place. The author expresses the hope that over the next 27 years the doubts about the date of the poet’s birth will be dispelled and in 2045 the 1100th anniversary of his birth will be celebrated.

Key words: *poet, date of birth, cryptography, decoding of cryptography, a calligraphic organization of speech, show, make visible and tangible*